

ԲԱՏԱՆԱԿԱՆ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պաշտոնի համար
 Տարեկան 12 մր.
 Վեցամսյ 6
 Արտատպանի համար
 Տարեկան 15
 Վեցամսյ 8
 Անդրհայկ համար
 Տարեկան 3
 Վեցամսյ 1.50
 Գրքերի վրա լինելու է
 Գրքերի արժեքը սույն
 քերական համար 40 սանդուխտ
 է. իսկ վերջին երեքի համար
 մուր 20 սանդուխտ է. երկուսն
 անկի անգրանկառու համար
 20 Օլգո գեղջ կրկայ :
 Վառնայի համար ձեռք 10 սանդուխտ

ՇԱՌԹՈՒՄ

Նամակ եւ պատճառներ
 իրարմարտութեան հասցիին
 —
 Редакция на известия
 «Шажумъ»
 I арва
 Redaction du journal
 «Chajoum»
 Varna (Bulgarie)
 —
 Արտատպանի ձեռք
)(20 ՍԱՆԹԻՄ)(
 Պաշտոնի համար ձեռք
)(15 ՍԱՆԹԻՄ)(

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻ ԶՈՐԵԲԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՌԹՈՒՄՈՐԵՐԸ

ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

Ապրիլի 1ին Միւնխենի մէջ տեղի պիտի ունենայ Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան համագումարը. մեր ստացած տեղեկութիւններէ համեմատ Թրանսայի եւ Անդրիայի հայ ուսանողութիւնը առհասարակ շատ անտարբեր է գտնվել զէպի Ուսանողական Միութիւնը եւ համագումարները :

Որչափ մեղ յայտնի է Անդրիայի մէջ հայ ուսանողութեան թիւը շատ չնչին է, իսկ ընդհակառակը Թրանսայի մէջ խոշոր թիւ են կազմում հայ ուսանողները :

Անդրիայի փոքրածիւ հայ ուսանողները գուցէ բոլորն էլ շատ գործնական մարդիկ են եւ չեն ուզում ու եւ գործով զբաղվել, կամ խնդրով հետաքրքրվել, ինչ որ իրենց ընտրած մասնաճիւղի շրջանից դուրս է. բայց Թրանսայի հայ ուսանողութեան անտարբերութիւնը մեղ շատ զարմացնում է :

Մեր աչքի առջեւն է Ուսանողական Միութեան համագումարի օրակարգը. այդտեղ Թրանսական հայ ուսանողութիւնից ոչ մի մասնակցող կայ :

Ինչի՞ն վերագրել այդ անտարբերութիւնը : Թրանսայի հայ ուսանողութիւնը անտարբեր է հանդիսանում գէպի այնպիսի մի գործ, որը ոչ միայն ամբողջ հայ ուսանողութեան համար օգտակար է, այլ եւ ամբողջ հայ ժողովրդի :

Թրանսան ոգեւորութեան ազատական եւ բարձր գաղափարների որրան աշխարհն է. այդ երկրի հարազատ ուսանողութիւնը միշտ ոգեւորվել է հանրամարդկային ընկերական գաղափարներով, միշտ աշխատել է նրանց իրականացնելու գործին ուժեղ զարկ տալու, եւ յանկարծ այդ շրջանի մէջ կը թփոզ հայ ուսանողութիւնը կարծես գիտականացել է :

Մի թէ իսկապէս Թրանսայի հայ ուսանողութիւնը բաղկացած է միմիայն հաճոյքի ետեւից ընկ-

նողներէ եւ չոր ու ցամաք կարիերիստներէ. թէ՞ մի ուրիշ պատճառ կայ որ Թրանսայի հայ ուսանողութիւնը թերանում է իր այդ գերագոյն պարտականութեան մէջ :

Յանկալի էր որ Ուսանողական Միութիւնը աշխատէր Թրանսայի հայ ուսանողութիւնը այդ անտարբերութիւնից հանել. ի հարկ է եթէ հնարաւոր է. Որովհետեւ, ինչպէս արդէն յիշեցինք, Թրանսայում, մտնաւանդ Փարիզում բաւական շատ հայ ուսանողներ կան, եւ նրանց հետո մնալը Ուսանողական Միութիւնից շատ վատ տպաւորութիւն կարող է գործել հայ գիտակից տարրի վրա, ու զանազան կասկածաւոր կարծիքներ կը յարուցանէ Թրանսայի հայ ուսանողութեան մասին :

Չը գիտենք, գուցէ մասնակցողներ կան եւ միայն համագումարի մէջ զեկոյցներ կարդացողներ եւ առաջարկութիւն անողներ չը կան Թրանսայից : Եւրանի թէ այդպէս լինէր :

ՎԱՐՈ

ԱՐՁԱԳԱՆՔ

Մինչեւ օրս ուսուսանողական շարժումները կը խեղդուէին առանց արձագանք մը տալու : Այսօր ընդհակառակը, ոչ միայն ուսուսանողները զանազան ասկարգներն մէջ արձագանք տուաւ, այլ եւ Եւրոպական ուսանողութեան :

Հռովմի եւ Փարիզի համալսարաններու ուսանողները, ազատամիտ թէ պահպանողական, միութիւններ կազմելով իրենց համակրանքը յայտնեցին ամբողջ ուսուսանողութեանը եզրուանքը ուսուսանողութեան :

Եւրոպայի ուսանողութիւնը այնքան առաջացաւ որ ուղեց նոյնիսկ ցոյցեր ընել Հռովմի եւ Փարիզի ուսուսանողական տուններու առջեւ :

Համերաշխութիւնը ամէն գործերու մէջ մեծ ազդեցութիւն ունի. նոյն համերաշխութիւնը աւելի զօրաւոր եւ ազդեցիկ է երբ այն կը լլայ զանազան ազգ-

րու եւ ցեղերու յառաջադէմ տարրերուն մէջ : Լայն, հանրամարդկային բարօրութեանը ծառայող իտէալները կրնան ծաւալուիլ եւ իրենց իրազորմանը շուտով հասնիլ այն ժամանակ, երբ ամէն ցեղերու գաղափարական մարդիկ ձեռք ձեռքի տուած աշխատին այդ իտէալները իրականացնելու :

Ընկերվարականները վաղուց ըմբռնած են այդ ճշմարտութիւնը եւ շատ անգամ գործնականապէս ալ կատարած են իրենց գործադուլներն մէջ :

Ուրախալի է որ ուսանողութիւնն ալ կաշխատի նոյն գործնական քայլերը ընել :

Ոմանք այն կարծիքն ունին թէ ուսանողները պարտաւոր են միմիայն իրենց ուսմամբ զբաղուիլ եւ երբէք պէտք չէ անոնց սրտերուն մէջ արձագանք գտնէ հասարակական բարդ երեւոյթները եւ խնդիրները :

Այդպիսի սրամտագրութեամբ է որ ուսուսանողները մը բոքիւստներ, շրջաբերական մը ուղղած են ուսական ուսանողութեան «գործազուլ» չընել, եւ քաղաքական հարցերով չի զբաղիլ, այլ միմիայն զիտութեամբ պարապիլ :

Այդ կարծիքը ըստ մեղ շատ սխալ է եւ ուրիշ անգամ կանգրադառնանք զայն շրջառահամար :

ԿՐՈՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

Վալտէկ Բուսսօյի նախարարութիւնը իշխանութիւնը ձեռք առնելուն պէս կոխի սկսաւ կղերականութեան դէմ, որովհետեւ անոնք էին գլխաւոր գորավիզը հասարակապետութեան հակառակ տարրերուն :

Կրօնականներու ազդեցութիւնը բոլորովին չեղոքացնելու համար, «հասարակապետութեան պատպան» տիպոսը ընդունող նախարարութիւնը որչանց կրօնական ընկերակցութիւնները սեղմող օրէնք մը զնել :

Այդ նոր օրինագիծը ահագին վիճարանութիւններու տեղի տուաւ երեսփոխանական ժողովին մէջ. կղերական կուսակցութեան պատկանող

երեսփոխաններ եւ անգոյն հասարակապետականներ կառավարութեանը զիմացրեցին եւ իրենց ճառերով կրօնական ընկերակցութիւնները շերտապէս պաշտպանեցին. բայց իզուր, այդ բոլոր պաշտպանութիւնները անհետեւանք մնացին եւ անցեալ օր երեսփոխանական ժողովի մէջ կրօնական ընկերակցութիւններու վերաբերեալ նոր օրէնքը քուէարկուեցաւ :

Այժմ այդ նոր օրէնքը պիտի առաջարկուի ձեռակոյտին հաստատելու համար, անկասկած ձեռակոյտն ալ պիտի հաստատէ :

Սակայն դժուարութիւնները կառավարութեան համար գեո լմնցած չեն. նոր օրէնքը գործադրուած միջոցին կրկին կոխներ պիտի տեղի ունենան, յետագիմականները զժողովութիւններ պիտի յայուցանեն :

Քաղաքական մեծ գործ մըն է որ վալտէկ Բուսսօյի կառավարութիւնը կը կատարէ այս օրէնքով, հասարակապետութեան ապահովութիւնը պաշտպանած ըլլալու համար :

Այս օրէնքով կրօնական ընկերակցութեանց աճուսի եւ զօրեղանալու առաջը պիտի առնուի, որոնք ճշմարտապէս հասարակապետութեան համար վտանգաւոր կը դառնային թէ քաղաքական, թէ տնտեսական եւ թէ ընկերական տեսակէտով :

Նոր ժամանակաշրջան մըն է որ կը սկսի Ֆրանսական հասարակապետութեան համար. այս օրէնքը նոր ներքին քաղաքական ուղղութիւն մըն է, որուն այսուհետեւ պիտի հետեւի հանրապետական Թրանսան :

Ասոր վերջը, կանուխ կամ ոչ, եկեղեցիին կառավարութեան անջատելիը պիտի ըլլայ : Դէպքերու տրամաբանական այս վերջաւորութեան արագութիւնը յետագիմականներէն եւ կղերականներէն կախած է :

Ասոնք իրենց վերջին տարիներու հակահասարակապետական ձգտումներով, գործերով եւ տրամադրութիւններով այս օրէնքի վերածննդեան պատճառը եղան, գուցէ նոյն բնութեանը եւ փութացնեն եկեղեցիին կառավարութեան անջատելիը :

Որչափ շուտ եկեղեցիին կառավարութեան անջատուի, այնչափ ազդեկ Թրանսայի համար : Որովհետեւ ամէն արքայականներու դաւադրութիւն եւ այն ազատութեան քոմիտեան հասարակապետութեան դէմ, կը քաջալերուին կղերականներու կողմէն :

Ասկէ զատ ահագին թիւ մը ֆրանսական մասաղ սերունդի այդ կրօնաւորներու անմիջական ազդեցութեան տակ կը դատարարուի եւ հոստած յետագիմականներու շարքերը կը լեցնէ :

ՖԵՆԵԱՆՆԵՐՈՒ ՊԵՏԻՆ ՄԱՇԸ

Իրլանտիոյ մէջ մեծեր է Ձէմս Սթէֆէնս, Իրլանտայի «Ֆէնիան» կոչուած յեղափոխականներու պետը եւ հիմնադիրը։ Ձէմս Սթէֆէնս պատմական դէմք մըն էր եւ հռչակուած թէ Եւրոպայի եւ թէ ամբողջ աշխարհի մէջ։ Անոր նպատակն էր Իրլանտիան Անգլիայէն դատել, եւ իրեն պակասութիւնը չէ որ այդ նպատակը չիրականացաւ։

1848 թուականին սովոր, աղքատութիւնը եւ ձմեռը միացած խեղճեցին «Ներտասարդ Իրլանտիոյ» յեղափոխութիւնը։ Յեղափոխութեան մարտիկը, որ սարսեցուց Եւրոպական պահերը, Իրլանտան ազատելու շահ գործը չեղաւ. տարի մը վերջը Վիգթորիա թագուհին ապստամբները այցելեց եւ ծափահարութեամբ ընդունուեցաւ անոնցմէ։ Այնուհետեւ Իրլանտա քնացած երեւցաւ։ Պատճառը ան էր որ անհաշտ յեղափոխականները հոն չէին. անոնցմէ երկուսը Փարիզ ապստամբն էին. մին Ձէմս Սթէֆէնս, միւսը Օ. Մանոնի, օժտուած կազմակերպչական տաղանդով, մասնակից գաղտնի ընկերակցութիւններու, յեղափոխական, ազատամիտ ազգասէրներ, ասոնք իսկոյն նոր յեղափոխական ընկերութիւն մը հիմնեցին. այդ Ֆէնիանիականութիւնն էր։ Օ. Մանոնի Ամերիկանցաւ, իսկ Սթէֆէնսը գնաց Իրլանտիա մարդիկ գրաւելու համար։ Այսպէս տասը տարի անցաւ 1850—1860. այդ ժամանակամիջոցին մէջ ասոնք ձայն մը չը հանեցին (կազմակերպութիւնը անպայման գաղտնի էր)։

Բայց 1861ին դէպք մը պատահեցաւ, զոր երկու յեղափոխականները հրաշալի կերպով շահագործեցին իրենց գործին ի նպաստ եւ որը մեծ բէկլամ մը եղաւ իրենց ձեռնարկութեանը համար։

Իրենց ընկերներէն մին, Մաք-Մանուս, Իրլանտիոյ թիապարտ, քանի մը անգամ աքսորուած եւ վերջը փախած՝ Սան-Ֆրանչէսկօ մէջ մեծաւ, Ասոր զմտած գիակը պարտեցուցին ամբողջ Ամերիկայի մէջ, որ իր յանտարցիներ կային եւ վերջ ի վերջոյ Տուպլին բերին։ Ամբողջ Իրլանտիան ցնցուեցաւ։ Այս ընդդէմ «Ֆէնիաններ» էին, մինչեւ այդ ժամանակը անյայտ։

Ստակը թափեցաւ ասոնց գրամարկդին մէջ։

Այդ պահուն Սթէֆէնս հիմնեց իր լրագիրը «Իրլանտայի ժողովուրդը» որով բացարձակ յեղափոխութիւն կը քարոզէր. հասարակապետական սահմանադրութիւն մըն ալ մշակեց Իրլանտիոյ համար։

Երեք տարի շարունակ Իրլանտիա պատեցաւ, ապազայ անկախութեան համար զինուորներ գրաւելով. ու շարունակ անձանօթ մնաց թէ ոստիկանութեան եւ թէ իր կուսակիցներուն։

Ոստիկանութիւնը զայն կը փնտռէր եւ չէր գտնար, ու կը զարմանար։ Բայց Սթէֆէնս սխալը ունեցաւ ապստամբութեան թուականը որոշելու, որ էր 1865ի սեպտեմբեր 23, ոստիկանութիւնը իմացաւ, խուզարկեց «Իրլանտայի ժողովուրդ» պարօնները, եւ այսպէս կրցաւ ձերբակալել զխուսոր գաւտիկները։

Սթէֆէնս կրցաւ իրուսափել եւ Տուպլինի մէջ պահուելուցաւ։

Անգլիական կառավարութիւնը զայն յանձնողին 575,000 ֆրանք խոստացաւ. բայց Սթէֆէնսն երկար չը կրցաւ պահուելու եւ նոյնմբեր 11ին ձերբակալուեցաւ. Դատար պիտի սենտուէր 28ին. Սթէֆէնս անվրդով սպասեց Ռիչմոնտի բանտի մէջ, շարունակ իր բարեկամներու հետ յարարութիւնը պահպանելով, թէ ինչ միջոցով ոչ ոք գիտէր, եւ 25ին երկոյնի ամենայն պարզութեամբ բանտէն դուրս ելաւ, գնաց, իմացուեցաւ որ երկու գլխաւոր բանտապաններ «Ֆէնիան» էին։

Փախստեան միջոցին շատ չարչարանք կրելէ վերջ 1866 թուականի մարտին նորէն Փարիզ հասաւ։

1891 թուին կրցաւ Տուպլին վերադառնալ, եւ ապրեցաւ մոտցուածի մը պէս, եւ ան ատենէն էր որ մեռաւ...

ՌՈՒՍ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՍՊԱՆԵՐԸ

Ինթերսպուրկի ուսանողական խումբութիւններու միջոցին շատ մը սպաններ ալ գէժ են հղած կառավարութեան գաղտնութեան։ Ասոնցմէ մին իշխան Վիպլէմսկի ձարի յանդիմանութեան արժանացեր է։

Ռուս յայտնի Ռազմագէտ զօրավար Տրակովիով պատերազմական նախարարի միջոցաւ յիշատակագիր մը ներկայացուցեր է ձարին՝ խուզարար ուսանողները զօրքերուն մէջ տեղաւորելու պատճառաւ։ Այդ յիշատակագրին մէջ Տրակովիով կըսէ որ զօրաբանակը պատժարան մը չէ, եւ զինուորութեան գաղափարը սխալ պիտի ըմբռնուի այստեսակ միջոցները գործադրուած պարագային։

Քիւիվի շրջանի մէջ, որուն զինուորական հրամանատարը ինք Տրակովիովն է, արդէն 2000է աւելի ուսանող զօրքերու մէջ տեղաւորուած են։

Ուրիշ նշանաւոր զինուորականներ նոյն վախը յայտնեցին, աւելցնելով որ զինուորական կարգապահութիւնը պիտի վնաս կրէ այս միջոցէն, որովհետեւ ուսանողներու միջոցաւ յեղափոխութեան սերմերը պիտի ցանուին զօրաբանակներուն մէջ։

Զօրավար Տրակովիով անցեալ տարիներն ալ ուսանողական խումբութիւններու միջոցին բուրդովին տարբեր դիրք բռնած էր։

Երբ Քիւիվի նահանգապետը իր մէջ զօրք ուղած էր ուսանողները զսպելու համար, ան պատասխանած էր թէ՛ «Ես զօրքով միայն թշնամիի գէժ կերթամ»։ Վերջը նահանգապետը պատերազմական նախարարին դիմած էր. վերջինս ալ հրամայած էր զօրք տալ, ինքը Տրակովիով կերթայ եւ համալսարանի շուրջը բանակ մը կը դնէ ու կը հեռագրէ պատերազմական նախարարին, «համալսարանը տիրեցի, բայց հոն չէր մեր թշնամին—ուսանողութիւնը»։

Ինչպէս կերելի ուսու սպաններու մէջ ալ ազատ գաղափարները բուն դրած են. ալ կը մնան պարզ զինուորները։

է՛հ, անոնք ալ կրնան ազատական գաղափարներով վարակուել րաւական է որ իրենց հրամանատարները ազատասէր ըլլան։

Ինչ կուզեն թող ըսեն. ժամանակը իր գործը կը տեսնայ կեանքի պահանջները յամառաբար բաւարարութիւն կը պահանջեն. ու ուս ժողովուրդ մարդկային ցեղերու մէջ բացառութիւն մը չի պիտի կազմէ։

ՊՕԹԱՅԻ ՇՐՁԱԲԵՐԱԿԱՆԸ

Պօէր ժէնէրալ Պօթա շրջանականով մը կը բողոքէ Անգլիացիներու անգթութեանց դէմ զորս գործ կը դնեն հանդէպ պօսկիներու եւ աղջիկներու։

Պօթա կը յայտարարէ որ անգլիական սպանները իրենց ձեռք գերի ինկած պօէր կիներն ու աղջիկները կը յանձնեն զինուորներուն որ պանոնք անպատուելի վերջը սպաննեն։ Անգլիացիները հասաննեն նոյն իսկ յղի կիները գաղտնութիւն մը՝ որ ամենափայլունի ժողովուրդները չեն ըրած Անգլիացիներու ձեռքէն փախապօէր գերիները անհատապէս դէպքեր կը պատճեն անգլիաց զինուորներու գործ դրած անգլիութեանց մասին, զոր կը կատարեն հանդէպ պօսկի կիներու եւ մանուկներու։

Այս ամէն գաղտնութիւններու գէժ բողոքելով հանդերձ Պօթա կը յայտարարէ որ ինքը երբեք չի կրնար իր մարդոց թոյլ տալ այդպէս անգթութիւն վարել ինկած անգլուհիներու եւ անգլիացի մանուկներու հետ։ Եւ կը պնդէ որ աշխարհի մէջ հատ մը պօսկի ալ մնայ ինքը չի պիտի հաշտուի։

Եթէ գերի ինկած պօսկիները ճիշդ տեղեկութիւններ տուած են Պօթայի, այն ատեն ամօթ Անգլիոյ, եւ ամօթ իր քաղաքակիրթ աղբի համբաւին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹՈՒՐԲԻՈՅ ՎԻՃԱԿԸ

Սուլթանի անձին նուիրուած Հուսնգարական թերթ մը նորերս, իր բոլոր պաշտօնակիցներուն պէս, կը հերքէր թուրք զօրքերուն պուրկար սահմանադրութիւնը հաւաքուելու լուրը, եւ կաւեցնէր թէ, հիմա Պօլսոյ մէջ, զրամական մտահոգութեանց պատճառաւ, մարդիկ միմիայն անդորրութիւն կը բաղձան։

Ստուգիւ ելեւմտական նոր տարին աւանդական սովորութեանց համեմատ, ոչխարներու ողջակէզով եւ մաքսատանց եւ ձկնարանի մէջ ազօթքներու յեղեղմամբ բացուած պիտի փակուի, երեւցածին նայելով աւելի մեծակի բոցով մը, աւելի սուր ողորմելիութեամբ եւ թուրքիոյ աւելի խորունկ քանդուումով մը։ Ոչ

Միւնիք պէյի խարբարօրէն Պ. Լուպէի բերնին մէջ գրած խօսքերը օսմանեան պիւտճէին բարգաւաճութեան մասին, ոչ Պօլսէն զրկուած ներքողալից թղթակցութիւնները Հանրային պարագի հասոյթներու յաւելման մասին, չի պիտի կարենան դատարկ գանձը լեցնել։

Այս գրամի տեղակին պակասութիւնը սակայն, կիսովին Սուլթանը կը մտաւանջէ. իր սեփական զրամը օտար արժեթղթերու վերածուած ի պահ կը մնան հաստատուն ու ապահով զրամատանց մէջ, եւ երբ անխուսափելի աղէտը գայ՝ վեհապետական հարստութիւնը չի պիտի վնասուի անկէ։

Անիկա երբէք փոյթ չընէր թէ պիտի կարենայ պէտք եղած դրամը գտնել զօրաբանակ մը շարժման մէջ գնելու համար. ալ ինքնիրեն եւ իր ուղիւրական խորհրդատուներուն հետ կը վիճի աւելի անմիջական շահեկանութիւն ունեցող եւ աւելի ողբերգական խնդրի մը վրայ. «պէտք է

արդեօք իսկոյն Հայաստանի եւ Մակեդոնիոյ մէջ ջարդի սկսիլ»։

Փառաւոր սպանութեանց իր բնական ճաշակը Համիտ էֆէնտին հաստատական պատասխանի մը պիտի մղէր։ Բայց կայսրութեան արդի վիճակը ուրիշ գերազանց պատճառներ կը ներշնչէ իրեն, որոնք քաղաքական հանգամանք ունին։

Հակառակ Եւրոպայի համիտական մամուլին լրբենի ստախոսութեանց խալիֆային գերագահութիւնը այսօր գրնթէ լոկ անուանական է երկրին մէկ քանի մասերուն մէջ, եւ այս իրողութիւնը խիստ ծանրակշիռ է, երբ նկատենք թէ ապստամբութիւն ու զժգոհութիւնը կը ձարակեն ոչ միայն քրիստոնեայ հպատակներու, ալ իսլամ հպատակներու մէջ ալ։

Որքան գաղտնի ջանան պահել Եմէնի դէպքերը, գարձաւ Երլազդին մէջ տեղեկութիւններ կ'ստացուին եւ մշտական յեղափոխութեանց շուրջը կազմակերպուած լուրթիւնը եւ գործակալութեանց մէջ սարածուած հա-

կասական լուրերն իսկ կը հասկցնեն թէ Երլազդի մէջ անոր ծանրութիւնը կը զգան։ Յուսկարին Սէյիտ Համիտ Էտտին ինքզինքը խալիֆա եւ մարզաբէն սերունդը հուշակէր եւ Արարացիք անոր կողմը բռնելու բաւական տրամագրութիւն ցոյց տուին...

Սուլթանի մէջ կացութիւնը նոյնանման է. Անշուշտ Մուլա Չէլի Երլազդէն կաշտուած յաջողեցաւ երբեմն Իրէքի եւ Իւսկիւպի գաշտակիցներէն անկեղծութեան ուղերձ մը փրցունել ինպատ Սուլթանին։ Բայց կրկին ալպանացիք բաքի կելուին, նոր գէպք մը ցոյց կուտայ թէ ասոնք ո՞ր աստիճան կրնան յարկը Համիտի իշխանութիւնները, Իրէքի մէջ, Մէհմէտ Ռիպա անուն մէկը սպաննել սուլթան տեղւոյն երեւելիներէն Մուսթաֆա պէյի սրդին որ մերժեց միւլթէսաբեֆին յանձնել մարդասպանը, ու միւսնոյն ատեն շուրջը հաւաքեց իր ցեղին մարդիկը։ Միւլթէսաբեֆը պարտաւորուեցաւ քա-

ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՍՈՒՇԻՆԵՐ

Երկու ամիս առաջ ուսուսանողուհի Վերա Թէլո համալսարանի մէջ ատրճանակ պարպեց բրոֆէսոր Տէշանէլի վրայ, որ երեսփոխանական ժողովին նախագահի հայրն է: Թէլոի ընկերուհին, օրիորդ Ջէլէնինա, գնդակի առաջը նետուելով բրոֆէսէօրը ազատեց, իսկ ինք վիրաւորուեցաւ և մինչեւ օրս կը տառապի:

Օրիորդ Թէլո Տէշանէլը ընդունեց ծերունիի մը տեղ, որ զինքը անպատուած էր: Թէ ինչի՞ մէջ կը կայանայ այդ անպատուութիւնը օրիորդը չի բարացատրեց ոչ ոքի:

Հիմա ալ բանտն է. անոր գէժ ոչ Տէշանէլը գատ բացած է և ոչ ալ իր բարեկամուհին Ջէլէնինա: Վիրաւորուած բարեկամուհին սրտայոյզ նամակով մը կառավարութեանէ խնդրած է որ զինքը վիրաւորող ընկերուհին բանտէն ազատեն, բայց կառավարութիւնը ակնաջ չի կախար:

Վերջերս այս խնդիրը խորհրդաւոր կերպարանք մը առած է:

Եթէ Օր. Թէլո սխալ մը գործած է, և անոր գէժ քատ բացող չի կայ, ալ ի՞նչ պէտք է բանտին մէջ պահել:

Փրանսական կառավարութիւնը չէ համաձայնած նոյնիսկ երաշխաւորութեամբ օրիորդ Թէլոն բանտէն հանել: Մարդ մըն ալ քովը չեն թողուր: Այս խորհրդաւորութիւնը հասարակութեան մէջ կասկածներ կը յարուցանէ. կը ենթադրուի թէ բրոֆէսէօր Տէշանէլ այնչափ ալ անմեղ չէ այս գործին մէջ: Թէլոի բարեկամուհին հազիւ կրցեր է անգամ մը տեսնալ զինքը ակամայ վիրաւորող սիրելի ընկերուհին:

Տեսակցութիւնը շատ յուլիշ եղած է:

Օրիորդ Թէլո ամէնու վկայութեամբ լուրջ և իրեն դասերով զբաղուող օրիորդ մըն է. և երբէք ընդունակ չի պիտի ըլլար առանց լուրջ պատճառի մը այդպիսի քայլ մը առնել:

Բարիկի հասարակութիւնը, մանաւանդ ուսանողութիւնը անհամբեր կսպասէ այդ խորհրդաւոր խնդրոյն ելքին:

ԵՐԵՎԱՆԻ ԳՆԱԿԱՎՈՒԹԻՒՆ

Վերջին ժամանակներս Փրանսայի և Իտալիոյ յարաբերութեանը բաւական բարեկամական գոյն առին. այդ առիթ տուաւ Եւրոպական մամուլին խորհրդածելու թէ՛ Իտալիա տրամադրութիւն ունի «Երբեակ դաշնակցութեան» հետևալ, դաշնագրութեան պայմանագրով լրանալէն յետոյ, Իտալիոյ՝ իր դաշնակիցներէն զատուելու գլխաւոր շարժառիթը կը համարուի այն, որ Իտալիա դաշնակիցներու պահանջները կատարած ըլլալու համար միշտ պարտաւորուած է իր ուժերէն վեր ցտաքային և ծովային զօրաբանակ պահել և պատերազմական ծախքեր ընել:

Այդ առիթը Պիւլովի օրգան գերմանական թերթը կը յայտարարէ. վերջերս, մանաւանդ փրանսական մամուլին մէջ, «Երբեակ դաշնակցութիւնը» իսպախեցութեան նիւթ դարձած է և շատ անգամ սխալ տեղեկութիւններ կը հաղորդուին անոր մասին:

Նախ և առաջ պէտք է հաստատել որ Իտալիոյ դաշնակիցները երբէք պայմաններ կամ ցանկութիւններ չեն յայտնած Իտալական զօրքին գործածման մասին:

Ի միջի այլոց «Երբեակ դաշնագրութեան» դաշնագրութիւնը երբ պետութիւններն ալ ազատ

կը թողու իրենց ծովային և ցամաքային ուժերը ոյրոյնուեն մէջ:

Եթէ դաշնակից պետութիւններէն մին մտածէ թէ՛ իր շահերը կը պահանջեն զօրքին թուր նսաղումը, այդ դաշնագրութեան ոչ մտքին և ոչ ալ գրուածքին հակառակ պիտի ըլլայ:

Դաշնակցութեան իւրաքանչիւր անդամը ընդունած է որ զօրաբանակին վերաբերեալ խնդիրները լուրջովին ներքին խնդիր են. թէ իրեն և թէ դաշնակիցներուն համար:

Կրտսի թէ Իտալիա իր ելուժական նեղութեանը պատճառաւ ստիպուած պիտի ըլլայ չի կատարել դաշնագրութեան պահանջները:

Իրապէս այդ տեսակ ստիպողական պահանջ մը գոյութիւն չունի:

ՄԱՐՍԻԼԻՈՅ ԳՈՐԾԱԳՈՒԼԸ

Քանի մը օր է որ Մարսիլիոյ նաւահանգիստին գործաւորները գործադուլ ըրած են, անոնց մասնակցեցան զանազան գործարաններու գործաւորներ: Մարսիլիան ամենաբանուկ և վաճառաչահ նաւահանգիստ ըլլալով՝ կառավարութիւնը շտապեց այդ գործադուլին առաջը առնել. սակայն ինչպէս կերելի նաւահանգիստին գործաւորները որոշած են մինչեւ իրենց պահանջներուն գոհացում ստանալը շարունակել գործադուլը:

Գործաւորները պատգամաւորութիւն մը զրկած էին Բարիկ կառավարութեան հետ բանակցելու համար:

Նախարարապետը Վալտէք Ռուսօ և վաճառականութեան նախարար Պ. Միլլան այնքան ալ գոհացուցիչ պատասխան չեն տուած պատգամաւորութեան:

Պատուիրակները տեսակցութիւն ունեցեր են և ընկերվարական երեսփոխաններու հետ:

Պատուիրակութիւնը Մարսիլիա վերադարձաւով Վալտէք Ռուսօյի առաջարկութիւնները պիտի հաղորդէ գործաւորներուն. եթէ գործադուլ ընողները համաձայնին, պատուիրակները իսկոյն նախարարապետին պիտի հաղորդեն:

Չանաչան գործարաններու գործաւորները համաձայնած են աշխատանքի սկսիլ և արդէն սկսած են: Այնպէս որ գործադուլը իր ընդհանուր կերպարանքը կորսնցուցած է:

Մարսիլիոյ քաղաքապետը ընկերվարական է, և կտուի թէ բաւական քաջալերած է գործաւորները իրենց բռնած ընթացքին մէջ:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

1900 թուականի գեկտեմբեր 7ին Պաքուի մէջ չորս թուրքեր յարձակում գործելու են հայ զինուոր Սեդրակ Յարութիւնեանի վրայ և ուզել են անոր հրացանը ձեռքէն խլել: Սեդրակ Յարութիւնեան հինգ վէրք ստանալով հանդերձ՝ հրացանը տուած չէ: Կովկասեան զօրքերու հրամանատարը այդ իրողութիւնը ձարին զեկուցեր է և ձարը իր ձեռքով գրած է, Պրաւօ: Կայսերական այս որոշումի պատճառով պատերազմական նախարարը յանձնարարած է Սեդրակ Յարութիւնեանի 20 բուպլի նուիրել և Աննայի շքանշանը տալ:

— Պարսից Նահը մեր կաթողիկոսի շնորհաւորական հեռագրին զոր զրկած էր նէվրուզ պայքրամին առիթը, պատասխանած է:

«Թիֆլիս, Նորին Սրբութեան Ամենայն հայոց կաթողիկոսին. «Ջերմ շնորհակալութիւններս

ղաքը շրջապատել և թնդանօթի հարուածներով ոչնչացնել Ռիզան և իր տունը: Որքան ալ դիւ հաւատարիմ մարդիկ գտնուին անոնց մէջ, սակայն Համիտ սկսած է իր ալպանացի պահակներէն ալ կասկածիլ:

Միւսնոյն ժամանակ Պոլսոյ մէջ ազատական շարժումներ կը ծաւալին և սպառնական հանգամանք կառնեն: Իրաւաբանական վարժարանը փակուած է և. բազմաթիւ ուսանողներ ձերբակալուած: Տեղի յեղափոխական ընկերութիւնը Սթամպուլի կողմը ցրուած է բազմաթիւ ձեռագրեր սպախու գրուած:

«Մենք օսմանցիքս, սարափի և անարդարութեան մէջ կապրինք և մեր մարդարէին գերեզմանը արիւնով ողողուած է: Մեր աղբիւններն ու կիները Ռուսին և Գերմանիային բռնութեանց ենթարկուած են: Միթէ առեւժին որչը կրնա՞յ օձի թագստոց ըլլալ: Արիւն ու արդարութիւն կը պահանջենք»:

Պատերու վրայ փակցուած թղթեր

խալտին կաւետեն մերձաւոր մեծ ուրախութիւններ ու կը հրախրեն քրիստոնեաները չի վախնալ երբէք:

Այսպէս ամէն կողմէ Ապաիւլ Համիտ կը զգայ իշխանութեան ձեռքէն փախչիլը իր սովորական մտերիմները զինքը նոր ջարդերու կը թելադրեն. կըսեն թէ կրօնական կիրքերը զրգուելով կայսրի է իսլամ ժողովուրդներու զժգոհութեանը տարբեր ուղղութիւն մը տալ:

Ասիկայ, յաջողեցաւ 1894 — 96ին և արեան հեղեղը կարծես կենդանացուց կարմիր Գազանը:

Կը մնայ գիտնալ թէ Եւրոպա պիտի թողու անպատիժ մարդասպանը երկրորդ անգամ ալ աշխատելու: Թէ և քաղաքակիրթ ըսուած կառավարութեանց թուլութիւնը անհուն է, սակայն չի միջամտել խիստ դժուար պիտի ըլլայ իրեն: Չնրս տարի է ի վեր կատարուած հրէշային վայրագութեանց վրայ լոյսը սփռուած է և զժուար է մտածել որ Ապաիւլ Համիտ յետ այսու կարենայ ջարդել

մեծ պետութեանց մեղսակցութեամբ անոնց լուծութեամբ և զանցառութեամբ:

Եւ ոչ իսկ կրնայ Ռուսիոյ պաշտպանութեան վրայ յուսալ և պէտք է արդէն իրոյս տալ այն խրատներէն որոնք իրեն արուեստան Մակեդոնիոյ մէջ խիստ միջոցներ ձեռք առնելու մասին: Երբ Մանաստրի մէջ, ուզեց պուլկար վարժարանի տեսչին տունը խուզարկել, այս վերջինը որս հիւպատոսին իմացուց որ իր խափառներով եկաւ վաճառեց ստակահանները: Գրեթէ իր թելադրութեամբ իսկ թափուած առաջին արեան կաթիլով «մոսկովը» երեկուան բարեկամը բոս իր սովորութեան անողոք թշնամիի մը չի՞ պիտի փոխուի:

Այսպէս Ապաիւլ Համիտ կը վարանի: Ո՞վ պիտի յաղթէ Եւրոպի մէջ, այն խմուկը որ առաջին սպանութիւններ խրատեց, պատրաստ է ոճրագործը մատնելու, եթէ ոճիրը պատժուի, թէ այն քանի մը քաջ մարդիկը որոնք արիւնատուշտ խե-

լագարը կը պահպանեն իր իսկ գազանութեան և այն ոճիրներուն դէմ որոնք իր կորուստը պիտի փութացնեն:

Մայրաքէլին սերունդէն քանի մը մարդիկ բուն կերպով կը բողոքեն խալիֆային անցեալ, ներկայ և ապագայ արարքներուն դէմ: Ահաւասիկ ինչ որ աւելի ծանր է քան թէ արտաքին ու է սպառնալիք. և թերեւս, օրը մօտեցած է երբ անթէ խալիֆա մը իր իշխանութիւնը գործ զնէ իր հպատակները ջարդելու, ներելի է զայն գահըկից ընելը, հարցումին Շէյխ Իւլիսլամը պիտի պատասխանէ սա տհալի բառը. «Գուր, ներելի է»:

Ու ցնծութեան մեծ ազգակ մը պիտի ողջունէ ազատարար Ֆէթվան:

Բ. ԳԻՅԱՌ

Իրօ Արեւելիս

կը յայտնեմ Ձերդ Սրբութեան
ձեր բարի մաղթանքներուն հա-
մար, զոր յայտնած էիք նէվ-
րուզ պայրամին առթիւ, և նոյն-
պէս մաղթանքներ կրնեմ Ձեր
թանկագին կեանքի պահպա-
նութեան համար: Եւ շատ լու-
օրիշատակ պահած եմ էջմիածին
կատարած այցելութեանս մա-
սինն:

Մուգափեհեսին

— Պարտի հայ մը, Լուսինիկ
Յարութեան, կտակագիր մը
չիներ է, որուն զլիաւոր տրա-
մագրութիւնները հետեւեալները
են:

Իր մահէն յետոյ իր կտակա-
կատարներուն կը յանձնարարէ
վաճառել իր բոլոր շարժական ու
անշարժ ստացուածքները, որոնց
արտադրած գումարէն նախ պի-
տի հոգացուի իր թաղման ծախ-
քը, յետոյ 10000 ռուպլի պիտի
յատկացուի Պարտի Ս. Լուսաւո-
րիչ եկեղեցիին: 5000 ռուպլի
էջմիածնի ճեմարանին ու մնա-
ցածն պարսկահայ գիւղի մը մէջ
արհեստական կամ գիւղատնտե-
սական ուսումնարան մը բանալու
պիտի գործածուի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռ Ո Ւ Ր Ք Ի Ա

Մակեդոնիայի Միւսոյ գիւղի
մօտերը պուլկար յեղափոխական-
ներու և թուրք զինուորներու
միջև կռիւ մը տեղի ունեցեր
է որուն միջոցին 13 թուրք զի-
նուոր սպաննուեր են և բաւական
թուով ալ վիրաւորուորուեր են:
Յեղափոխականները առանց փնտ-
սել կրելու կրցեր են հեռանալ:

— Սամօսի մէջ կատարեալ յե-
ղափոխութիւն է, կղզիին հարա-
ւային մասը ամբողջովին ապս-
տամբած է: Թուրք կառավարու-
թիւնը կղզիին իշխանի խնդրա-
նօք պատերազմական նաւ մը
զրկեր է:

— 2800000 Մովզէրեան փամ-
փուշտներ որ Համպուրկ կը գըտ-
նուին, շուտով Պոլիս պիտի զըր-
կուին:

— Պոլսոյ մէջ ալ երկրաշարժ
պատահեր է և այն միջոցին, երբ
Սուլթան գուրպան պայրամի առ-
թիւ այցելութիւններ կընդունէր:
Սուլթանը շատ վախցած է:

— Պոլսոյ մէջ լուր տարած-
ուած է որ Սուլթանի կեանքին
դէմ օտարականներու կողմէն
դաւադրութիւն կայ: ատոր հա-
մար սուլթանը պատուիրած է որ
Սելվալքին այցելող օտարական-
ներու համար չինուած քէօշքը
քանդեն:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Ինթերպուրկի ուսանողներէն
60 հոգիի չափ մտադրուեր են
պատուիրակութեամբ երթալ Ձա-

րին քով ուս երիտասարդու-
թեան արտունջները և պա-
հանջները ներկայացնելու հա-
մար: Բայց ոստիկանութիւնը ա-
նոնց արգելեր է և մէկ քանին
ձերբակալեր է:

— Ռուս պաշտօնական թերթը
կը հաղորդէ որ ներքին գործոց
նախարարը գրաքննիչներէն
միայն նախագահութեամբ մաս-
նաւոր յանձնարարութիւն կազմ-
է, որուն պաշտօնը պիտի ըլլայ
հսկել ուս հեռագրական գոր-
ծակալութեան վրայ որ ուսական
տեղեկութիւնները օտար մա-
մուլին, և օտար տեղեկութիւն
ները ուս մամուլին հայթայ-
թելու մօտօրօյը ունի:

— Սինթի բրօքքոր Բօպէտոնոզ-
ցէվին վրայ ատրճանակ պարպող
Լագովսկի ժամանակին սպասած էր
և յարաբերութեան մէջ կը գըտ-
նուէր ուս յեղափոխական «նա-
րօսնայա Վոլիա» կօմիտէին հետ:
1880 թուին ձերբակալուեցաւ և
անոր քովը գտնուեցաւ կայսերա-
կան պալատի յատակագիծը: Լա-
գովսկի այդ միջոցին գտաւ
պարտուեցաւ հինգ տարուան
բոնտարկութեան Ելիսէրպուրկ
ամրոցին մէջ: Ժամանակը լրա-
նալէն վերջը Լագովսկի յայտ-
նուեցաւ որ կայսերական հրամա-
նով հինգ տարի եւս բանալ պի-
տը մնայ:

Լագովսկի յայտարարած է որ
իր Բօպէտոնոզցէվին վրայ ըրած
փորձը բոլորովին կապ չունի թօ-
լութօյի խնդրոյն հետ: ասով
միայն ուզեր է քաղաքական թէ-
բօրիվ մի գործ մը կատարել:

— Մոսկուայի բրօքքէօրներէն
մին հոչակաւոր և յարգուած պատ-
մագէտ Միլիւքով, ուսանողները
զօրաբանակին մէջ տեղափոխելու
պատճառաւ խնդրագիր մը պատ-
րաստած է եղեր Ձարին ներկա-
յացնելու և խնդրելու որ 1899
Յուլիս 29 թուակիր հրովար-
տակը «ուքազը» չնջէ:

Այդ գրութիւնը, որու մէջ ար-
գէննչանակուած են Գիլէփի ուսա-
նողութեան այս յանձնարի խառ-
նակութիւնները, թանկագին վկա-
յագիր մըն է ուս համալսարա-
նականներուն մտքերուն ներ-
կայ վիճակին համար: Այդ գրու-
թիւնը ոստիկանութեան կողմէն
գրաւուեր է, նախ քան Ձարին
ներկայացնելը: Պ. Միլիւքով
ձերբակալուեր է և քստրուեր է
հեռաւոր նահանգ մը: Երբ մի
միւս համարին մէջ այդ թանկա-
գին գրութեան թարգմանու-
թիւնը պիտի տանք:

— Կրթական նախարարը սպան-
նոց Գարբուլիչ 20 տարուան տա-
ժանակիր աշխատութեան գտաւ
պարտուած է:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Սօֆիայէն «Թան» կը հեռագ-
րեն որ պատերազմական նախա-
րարը ծառայութեան մէջ գըտ-
նուող սպաններուն արգելած է
մասնակցիլ Մակեդոնական Կօմի-
թէի գործերուն՝ սպաննալով որ
չը հնազանդողը աստիճանը կը
կորսնցնէ և խկոյն պաշտօնունկ
պիտի ըլլայ: Լուր կը պատի թէ
քանի մը սպաններ, որոնք հակա-
ռակ այս հրամանին արձանա-
գրուած էին մասնակցելու Մակե-
դոնական Կօմիթէներու համա-
գումարին, արձակուած են:

Քաղաքական իշխանութիւնն
ալ մտադիր է նոյն միջոցները
ձեռք առնուլ:

— Մարտ 18ին Վառնայի մէջ
բաւական զօրաւոր երկրաշարժ
տեղի ունեցաւ: ցնցումներ եղեր
են Պուլկարիոյ զանազան քա-
ղաքներու մէջ: Ինչպէս նաեւ
Օտեսա, Պուքրէշ, Իտալիոյ մէկ
քանի քաղաքները, նոյնպէս և
Պոլիս:

Վառնայի մէջ տներ ճախուցան,
մարդոց փնտս չէ եղեր: Բայց
վախցողներ շատ եղեր են:

— Ֆէրիհանտ իշխանը զահա-
ժանակ իշխանին հետ արտա-
սահման երթալով նախարար-
պետին պատուիրած է որ շարու-
նակ հեռագրով իրեն հետ յա-
րաբերութեան մէջ ըլլայ և երկ-
րին գործերու մասին տեղեկու-
թիւն տայ:

— Պուլկար թերթերը կը հա-
ղորդեն որ նախարարապետ Պ.
Քարալէլօվ տեսնալով որ շատ մը
երեսփոխաններ, ժողովատեղիէն
դուրս շատ մը աւելորդ պահանջ-
ներ կընեն ու հարցեր կուտան
իրեն, յայտարարած է որ ոչ մէկ
երեսփոխան իրաւունք չունի ժո-
ղովէն դուրս հարցումներ ընել և
վարչութեան մասին հաշիւ պա-
հանջել: Հարցումներուն ինք
միայն երեսփոխական ժողովին
մէջ պատասխան պիտի տայ:

— Սօֆիայէն կը հեռագրեն որ
նախկին նախարարապետ և պահ-
պանողական կուսակցութեան պետ
Սթոյիլօֆի անցեալ երկուշարժի
կաթուած իջեր է և երկէ կրիչը
ժամը 10ին մեռեր է 53 տարե-
կան հասակին մէջ:

Չ Ի Ն Ս Ա Տ Ա Ն

Մանչուրիոյ մէջ ծանր խոռ-
վութիւններ ծագած են:

— Ճարտական նաւարաննե-
րուն մէջ մեծ գործունէութիւն
կը տիրէ: Ճարտն բազմաթիւ զի-
նուորներ կը զըկէ: Չինաստան
բարձրատիճան սպաներ ալ Գո-
րէա: այս բոլորը Ռուսիոյ Ման-
չուրիոյ տիրապետելու առաջըն
առնելու համար է:

— Ինթերպուրկին կը հաղոր-
դեն որ Ռուսիա, հանդէպ Չի-
նաստանի մերժման Մանչուրիոյ

պայմանագրութիւնը սորագրե-
լու, սրոչաձ է Մանչուրիան պա-
հել, Չինաստանի հետ իր բոլոր
յարաբերութիւնները խզել և
թշնամութեանց վերսկսիլ, եթէ
հարկ ըլլայ:

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Միացեալ Նահանգներու և Վե-
նէցուէլլայի յարաբերութիւն
ները խիստ լարուած են: Միաց-
եալ Նահանգներու դեսպանը եւ
կանչուեր է:

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Պրանսայի նախարարապետ
Վալտէր Ռուսսօ բաւական ծան-
հիւանդ է:

Ա Ն Գ Լ Ի Ա

Լօրտ Սալուպրի, Անգլիոյ նա-
խարարապետը հիւանդ է և զրոյթ
կայ թէ պաշտօնէն պիտի հրա-
ժարի:

Թ Ա Տ Ր Ո Ն Ս Ա Ն Գ Ր Ա

Վաղը կիրակի գիշեր, մարտ
25, ժամը 8 1/2 ին, հայ դե-
րասանական խմբին կողմէ ըս-
խնդրանաց ազգայնոց պիտի
ներկայացուի «Տաւրոսի հերոս-
ներ» կամ «Յայթանակ Ձեյ-
թունցուց»:

Իրական թատերախաղ երգա-
խառն հինգ արարուած 3 պատ-
կերով յորում պիտի յաջորդի
կենդանի պատկեր մը:

Գիները սովորական:

Տ Օ Ք Ք Ս Ս Մ Ո Ն Գ Ո Ւ Յ Ո Ւ Մ Ճ Ե Ա Ն
Ի Ֆ Ի Լ Ի Պ Է

Մանկարձ, կնիստարոյժ և
մասնագէտ միգրիտ հիւանդութեան
որ բաւական ժամանակէ ի վեր Բա-
րիկ կը գտնուէր վերոյիշուած հիւան-
դութիւններու նորանոր դարմաննե-
րու մասին ասիական համար, վերադար-
ձած ու Ֆիլիպէ հաստատուած է
պողոտայի վրայ նամակատան ճիշ-
դէմ փողոցին մէջ, Հիւանդ կըն-
դուի ամեն օր ժամը 2—6 հինգ
շարժի օրերը միեւնոյն ժամերուն
միայն կրնի քրտար կը դարման-
ուին: 4—5

Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ի Կ Ն Ի Ր Ո Ւ Մ Ի

Կը տպագրուին ամէն լեզու
այցեւորուն, հասցէտուն, նամա-
կագրուի, հարուանկան հրաւի-
րագիր, մահազը:

Գիները յոյժ գիւրամատչելի
Ուրիշ քաղաքներէ եկած
յանձնարարութիւններ ճշդու-
թեամբ և փութով կը կատար-
ուին:

Յ Ա Ն Ձ Ե Ս Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ի Ն Ե Ր Ը Կ Ս Ի Թ Ի

ОТГОВОРНИКЪ:
Д-ръ МЪГЪРДИЧЪ ВАРТАНЪ

Печ. «Взаимность» — Варна.